

«ՀՈՎԻՒ ՔԱՋ ԶԱՆՁՆ ԻՒՐ ԴՆԷ Ի ՎԵՐԱՅ ՈՁԽԱՐԱՅ»

Հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունի Արցախյան հարցի արդար լուծումը: Այն իր լարումին է հասել մանավանդ այսօր, երբ հայ ժողովրդի զավակների բողոքի արդար ձայները դեռևս մնում են անարձագանք:

Հայ ազգի որդիները, ազգային արժանապատվության պահպանման իրենց արդար պահանջների բավարարման պայքարի ճանապարհին, ընտրում են այդ պայքարը շարունակելու նորանոր ձևեր, միջոցներ: Հուսահատության և անօգնականության թույլ ձայներ չեն դրանք, այլ ցասումի ճիչ ու արդարության պահանջ, անվախ խիզախում և անձնազոհության քաջ օրինակ:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյան, հայտնի գրող-հրապարակախոս Զորի Բալայան, վաստակաշատ արվեստաբան ու սիրված դերասան Սոս Սարգսյան, Արցախի բարձունքներից իջած և ոգով արի Վաչագան Գրիգորյան ու Մաքսիմ Բաբայան, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ, հայորդիներ, որոնք իրենց մեջ քաջություն գտան մի կողմ թողնելով այն ամենը, ինչ բարիք է այս երկրի վրա, իրենց կյանքը վտանգի ենթարկելու գնով իսկ հայտարարել քաղաքական հացադուլ, որը տևեց երեք շաբաթ:

Արցախյան խնդրի արդար լուծում, տեղական իշխանությունների վերականգնում Արցախում, զինվորականների տեղաբաշխում Արցախի և Ադրբեջանի սահմանագծի վրա: Ահա այս պահանջներն էին դրել հացադուլավորները:

Ազգիս Վեհափառ Հայրապետը օր-օրի ուշադիր հետևում էր հայ ազգի պանծալի զավակների գործունեությանը՝ վախենալով նրանց կյանքի համար: Տեսնելով, որ հացադուլը երկարաձգվում է, և անսալով իր հայրական

խղճի ձայնին՝ Նորին Սուրբ Օծությունը սեպտեմբերի 15-ին հուզիչ հեռագիր է ուղարկում նրա մասնակիցներին և ապա՝ երկրի պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին:

Սակայն անցնում էին օրեր, իսկ հացադուլավորների՝ հացադուլը շարունակելու վճիռը մնում էր անդրդվելի: Օրեցօր հյուծվում և թուլանում էին նրանք: Եվ, վերջապես, Մոսկվայից հասնում է անհանգստացնող լուրը՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, այդ ծերունազարդ գիտնականը, ֆիզիկական ծանր վիճակում տեղափոխվում է հիվանդանոց:

Զգալով, որ հապաղելն այլևս անհնար է, Նորին Սրբությունը կայացնում է իրեն հատուկ մի իմաստուն որոշում. անձամբ մեկնել Մոսկվա և փորձել համոզել հացադուլավորներին՝ դադարեցնելու այն:

Հաջորդ օրն իսկ, սեպտեմբերի 27-ին, հինգշաբթի, Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսը, ուղեկցությամբ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերատեսուչ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ուղևորվում է Մոսկվա:

Կարճատև լուռ աղոթք Ս. Էջմիածնի Մայր տաճարում և, ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների, ազգիս Վեհափառ Հայրապետը ճանապարհվում է «Զվարթնոց» օդանավակայան:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը:

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա, ուր Նորին Սրբությանը բարի գալուստ է մաղթում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան եպիսկոպոս Կյուրեղյանը: Այնուհետև Վեհափառը առաջնորդվում է «Մոսկվա» հյուրանոց, ուր բնակվում էին նաև հայ հացադուլավորները:

Հյուրանոց ժամանելուց անմիջապես հետո Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Անանիա և Տ. Տիրան եպիսկոպոսների, կարճատև այցելություն է տալիս մեր չորս հացադուլավորներին, որոնք գտնվում էին Զորի Բալայանի № 1013 սենյակում:

Անչափ հուզիչ էր այդ հանդիպումը. գրկախառնություն, արցունք, հիացմունք, աղերս ու կոչ՝ ուղղված ամենակարող Աստծուն:

Մոտ կես ժամ նրանց հետ հայրաբար զրուցելուց հետո Նորին Սուրբ Օծությունը վերադառնում է իր համարը՝ խոստանալով երեկոյան նորից այցելել քաջ հայորդիներին:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 28-ին, Վեհափառ Հայրապետը ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարության լրատվական կենտրոնում ներկա է լինում մամլո ասուլիսի, որին մասնակցում էին խորհրդային և օտար լրագրողներ:

Ասուլիսի բացումից հետո, որը կատարում է Մոսկվայում Հայկական Հանրապետության ներկայացուցիչ տիար Էդվարդ Հայկազյանը, խոսքը տրվում է Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետը նախ ներկաներին պատմում է հայ ժողովրդի մասին, թե ինչպես նա աշխարհում առաջինը ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Ապա այն դերի մասին, որ դարերի ընթացքում կատարել է Հայ Եկեղեցին մեր ժողովրդի կյանքում: Ցույց է տրվում նաև այն մեծ բարեկամական կապը, որ մինչ այսօր գոյություն ունի Հայ և օտար Եկեղեցիների, կրոնական կազմակերպությունների և նույնիսկ՝ այլադավան համայնքների հետ:

Խոսելով Արցախի այսօրվա վիճակի մասին, Նորին Սրբությունը նախ շեշտում է այդ հարցի արդար լուծման կարևորությունը և ապա համոզմունք հայտնում, որ այս պայքարը պիտի ավարտվի հայ ժողովրդի հաղթանակով: Այս իմաստով էլ, ասում է Վեհափառ Հայրապետը, մեր Մոսկվա գալը և հացադուլավորներին այցելելը ունի մեկ կարևոր նպատակ, նախ արտահայտելու մեր հիացմունքը նրանց քաջ արարքի նկատմամբ և ապա խորհուրդ տալու դադարեցնել հացադուլը և ընտրել պայքարի այլ՝ նորանոր ձևեր:

Իր խոսքի վերջում Նորին Սուրբ Օծությունը պատասխանում է լրագրողների հարցերին:

Մոսկվայում գտնվելու հաջորդ օրերին ևս Վեհափառ Հայրապետը մխիթարության և հուսադրիչ այցելություններ էր տալիս հացադուլավորներին՝ պարզ ու անկեղծ զրույցներով փորձելով նրանց ետ պահել հացադուլը շարունակելու մտքից: Եվ այդ նրան հաջողվում է. հոկտեմբերի 1-ին հայ ժողովրդի քաջարի զավակները աշխարհին ուղղված իրենց պաշտոնական հաղորդագրության մեջ հայտնում են իրենց որոշումը, որի մեջ ասվում է, թե, անսալով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորներին, նրանք դադարեցնում են հացադուլը՝ իրավունք վերապահելով, սակայն, իրենց պահանջների չբավարարման դեպքում ցանկացած ժամանակ վերսկսելու այն:

Սույն հայտարարությունը ցնծությամբ է լցնում բոլոր ներկաների և մանավանդ Վեհափառ Հայրապետի սիրտը:

Հոկտեմբերի 2-ի առավոտյան ժամը 10-ին Նորին Սուրբ Օծությանը Կրեմլում ընդունում է ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովը: Նրանց միջև տեղի է ունենում շուրջ կեսժամանոց հարգալից զրույց, որի ընթացքում շոշափվում են Արցախի և Հայաստանի վերաբերյալ մի շարք քաղաքական հարցեր:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հացադուլավոր հայորդիների հետ ժամանում է Երևան:

Օդանավակայանում հավաքված հարյուրավոր դիմավորողներ մեծ ջերմությամբ ու արցունքներով են դիմավորում Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ ոտք է դնում հայրենի հողի վրա՝ իր քաջ արծիվներով շրջապատված: Այստեղ են նաև Հայաստանի կառավարության անդամները, հացադուլավորների հարազատները, Մայր Աթոռի միաբանությունը:

Այնուհետև գրկախառնություններ, ծաղիկներ, ուրախություն ու հուզում, որից հետո ավտոմեքենաների շարասյունը ուղևորվում է Հայաստանի Հանրապետության Խորհրդարան:

Այստեղ ևս Խորհրդարանի պատգամավորները հոտնկայս ծափահարություններով են դիմավորում Վեհափառ Հայրապետին և հացադուլի ընտած հերոսներին:

Ճնորհակալական խոսքով Խորհրդարանի առջև հանդես են գալիս ժողովրդական պատգամավորներ, հացադուլավորներ Զորի Բալայանը, Սոս Սարգսյանը, Մաքսիմ Բաբայանը և Վաչագան Գրիգորյանը, իսկ եզրափակիչ խոսքով՝ Վեհափառ Հայրապետը:

Բոլոր ելույթները ընդունվում են հոտնկայս ծափահարություններով, որից հետո Ամենայն Հայոց Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, մեկնում է Ս. Էջմիածին:

Նորին Սրբության այցը Մոսկվա քարոյական հաղթանակի մի պայծառ էջ հանդիսացավ մեր ժողովրդի համար: Այն լավագույն ձևով ցույց տվեց ոչ միայն հայի ըմբոստ ոգին, մինչև մահ պայքարելու իր ժողովրդի ազատության և հայրենիքի անկախության համար զոհվելու ձգտումը, այլ նաև իմաստությունն ու խոհեմությունը՝ ցանկացած դժվարին պահին անգամ լսելու իր Մեծի խոսքը, ու որոնել պայքարի նոր ձև:

ԱՆԱՆԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԱԲԱՋՅԱՆ